Հայաստանի արդիւնաբերութեան և ելևմուտքի բարելաւման տեսակէտից, սակայն, վճռական դեր պիտի կատարէր Անկախութեան Փոխառութիւնը, որի օրէնքը հրատարակուեց յունիս 10-ին: Օրէնքը ասում էր.

«1. Հայաստանի Հանրապետութեան արդիւնաբերական ուժերը և տնտեսութիւնը վերականգնելու և Հանրապետութեան Թղթադրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն ամերիկեան դոլարի անուանական գումարի պետական փոխառութիւն 6 տոկոսով: Փոխառութեան 75 տոկոսը յատկացնել վերոյիշեալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրել պետական այլ կարիքների համար»:

Փոխառութիւնը արեւելու էր 10 տարով, Հայաստանում և արտասահմանում: Բաց էին թողնելու 10, 25, 50, 100, 500 և 1000 դոլարնոց պարտաթղթեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից: Փոխառութիւնը ապահովւում էր Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյքով: Փոխառութեան գործի ղեկավար նշանակուեց Ա. Խատիսեանը, որը այդ առաքելութեամբ ուղարկուեց արտասահման:

Անկախութեան փոխառութիւնը անօրինակ խանդավառութիւն առաջ բերեց Հայաստանի և արտասահմանի հայկական բոլոր խաւերի մէջ: Քաղաքական կուսակցութիւններ, հասարակական կազմակերպութիւններ, մամուլ, անհատ գործիչներ — ամենքը աջակցեցին կառավարութեան, որ փոխառութիւնը ունենայ յաջող արդիւնք: «Միջկուսակցական Մարմինը հետևեալ կուսակցութիւնների, — հեռագրում էին յունիս 21-ին Խատիսեանին — Հայ Ժողովրդական կուսակցութեան, Հայաստանի Սոց.-Դեմոկրատ Բանւորական կուսակցութեան, Հայ Ռամկավար կուսակցութեան և Անկուսակցականների Միութեան — գտնելով, որ Հայաստանի անկախութեան փոխառութիւնը 20 միլիոն դոլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական և տնտեսական դրութեան բարելաւման համար, ամէն կերպ պաշտպանում է կառավարութիւնը այդ փոխառութեան իրականացման գործում, և դիմում է բոլոր հայերին՝ առաջարկելով եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ նրա տարածման մէջ: Լիազօրներ Հ. Ժ. կուս.՝ Տէր Խաչատրեան, Ստեփանեան, Հ. Ս.-Դ. Բանւ. կուս.՝ Իշխանեան, Անանուն, Հ.Ռամկ. կուս.՝ Դարբինեան, Շաուլորեան, Անկուս. Միութեան՝ Արէշեան, Զալխուշեան»:

Փոխառութեան բացումը Երևանում կատարուեց մեծ հանդիսաւորութեամբ, օգոստ. 1-ին: Բազմաթիւ անհատներ, հիմնարկութիւններ, Խորհրդարանի և կառավարութեան անդամները տեղն ու տեղը արձանագրուեցին որոշ գումարներ: Կաթուղիկոսը էջմիածնի կողմից արձանագրուեց 1 միլիոն ռուբլի: Մի քանի ժամւայ մէջ հաւաքուեց 45 միլիոն ռուբլի: Նոյն ոգևորութեամբ արձանագրութիւնը տեղի ունեցաւ և դաւառներում: Արդահանի մահմետականութիւնը փոխառութեան մասնակցեց 50 միլիոն ռուբլով, որը, սեպտ. 5-ին, դաւառապետ Կազիմովը անձամբ մտցրեց Կարսի պետական գանձարանը: Սեպտ. 5-ին արդէն Հայաստանին յատկացւածը աւելով ծածկւած էր, և կառավարութիւնը փակեց բաժանորդագրութիւնը Հայաստանի սահմաններում: